ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 17 ՀՈՒՆԻՍԻ

Գործադուլի չորրորդ շաբաթն է, ավարտվում։ Շարունակվում են ցույցերն ու միտինգները։ Այդ օրը կա երթն ավարտվեց միտինգով Հաղթանակի հրապարակում։

Կիզակետում Հայկական ՍՍՀ և Ադրբեջանական ՍՍՀ գերագույն սովետների նստաշրջաններն են, ավելի կոնկրետ՝ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Ադրբեջանական ՍՍՀ և Հայկական ՍՍՀ գերագույն սովետների առջև միջնորդելու մասին» Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային սովետի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանի որոշման քննարկումը վերսկսվեց նստաշրջաններում։

Ելույթ ունեցողները մեծ գոհունակությամբ ու երախտագիտությամբ ընդունեցին այն փաստը, որ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը ստեղծված լարված իրավիճակը, ինչպես նաև Ինքնավար Մարզի հայ բնակչության իղձերը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանը որոշել է համաձայնություն տալ մարզը Հայկական ՍՍՀ կազմի մեջ մտնելուն։ Ընդգծվեց, որ դա ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառման արտահայտություններից է և, իրոք, չի խախտի երկու հանրապետությունների միջև եղած ավանդական բարիդրացիական հարաբերությունները։ Նշվեց նաև, որ ղարաբաղցիները հուսով էին, թե Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի որոշումը ըմբռնումով կընկալվի ադրբեջանական ժողովրդի կողմից։ Դրա արտահայտությունն էր Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանից մեկ օր առաջ մարզային թերթում հրապարակված դիմումը Ադրբեջանի աշխատավորներին, որտեղ կոչ էր արվում խսկական ինտերնացիոնալիզմ և մարդասիրություն, պրոլետարական համերաշխություն և հարգանք դրսևորել Լեռնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնության իղձերի նկատմամբ։

Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանը, սակայն, մերժեց և այն էլ ոչ թե մարզսովետի արտահերթ նստաշրջանի միջնորդությունը, այլ «մի խումբ դեպուտատների դիմումը»։ Միտինգում արձանագրվեց այն փաստը, որ Ադրբեջանական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանը հոտնկայս հարգեց այն դեպուտատների հիշատակը, ովքեր կյանքից հեռացել են, բայց չհարգեց սումգայիթյան ողբերգության անմեղ զոհերի հիշատակը, ինչպես դա արվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նստաշրջանում։ Ընդգծվեց, որ Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ կատարված իրադարձությունները այս անգամ էլ չստացան իրենց սկզբունքային, օբյեկտիվ գնահատականը և որերորդ անգամ ներկայացվեցին ծուռ հայելու մեջ։

Գործադուլը դադարեցնելու մասին կոնկրետ առաջարկներ չարվեցին։

Խմբագիր՝
Մ. Ե. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ